թուին և հրամանաւ քաղաքական իշխանութեան հեռացաւ Զամախուց՝ գնալ Տաճկաստան իւր հայրենի Մալաթիա քաղաքը։

Ինչքան նորա քարոզները լսողները պատմում էին, քարոզների մեծ մասը եղել է յանդիմանութիւն իւր խմբին, որ հայոց եկեղեցուց հեռանալով՝ մի առաւելութիւն կենաց և կառավարութեան մէջ ցոյց չեն տուել, մի տարբերութիւն չեն արել իրենց վարուց, բարուց և սովորութեանց մէջ. ուրեմն՝ ասում էր և կրկնում. «եթէ այդպէս անկարգ և անշնորհք պէտք է մընայիք, էլ ինչ այսքան աշխատութիւն և պարծանք ձեզ, մի թէ հայոց եկեղեցին չէ խրատում հեռի մնալ ամեն մոլորութիւնից»։

Իսկ ես աւելացնեմ. միթէ մեր եկեղեցին ամեն օր Ս. Աւետարանի միջոցաւ չէ կրկնում Տեառն Յիսուսի փրկարար խօսքերը, որք հրաւիրում են դէպի արքայութիւն երկնից։ Միթէ մեր եկեղեցին չէ սովորեցնում լինել Աստուածասէր, եղբայրասէր և մարդասէր։ Միթէ չէ քարոզում սէր, խաղաղութիւն, և ինչ որ կը վայելէ քրիստոնէին։ Այո՛ միշտ։

Զամախեցի հայոց լաւութեան և բարեգործութեան տիպ և օրինակ 2-300 տարուանից ըստ որում պարզ ու բացարձակ կարող են լինել Լալայեանց ազնուատոհմ իշխաններն՝ որ Զամախի ու Բագու քաղաքներումն են գտնուել. ուստի կարեւոր յոյժ համարեցի Լալայեանց ազնիւ տոհմի համառօտ պատմութիւնը «Կենսագրական ակնարկ» վերնագրով օրինակել գրքիս մէջ, որը պատմութիւնից և աւանդութիւնից քաղելով՝ Բագուի արժանապատիւ Խորէն աւագ քահանան մեր խնդրանաց համաձայն՝ ուղարկել էր մեզ։

Այս համառօտ կենսագրական պատմութիւնից, որոյ վերջին դարուս անցքերն առաւելապէս քաղած կ'լինի Լալայեանց տան այժմեան եօթանասունամեայ պատկառելի նահապետ —